

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՏ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ  
ՏՐՄԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2013

ՀՏԴ 355/359 (479.25)

ԳՄԴ 68.49 (2h)

Հ 247

## Կազմող՝ Ալվինա Աղաբարյան

Խմբագրական խորհուրդ՝

Նախագահ Արամ Սիմոնյան

Անդամներ Ալիկ Ղարիբյան

Լևոն Շիրինյան

Դավիթ Զամալյան

Վահրամ Միքայելյան

Նարեկ Գալստյան

Ալվինա Աղաբարյան

Հ 247 Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործնթացների համատեքստում / ԵՊՀ; Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, կազմ.՝ Ա. Աղաբարյան; Խմբ. խորհուրդ.-Եր., ԵՊՀ, 2013-188 էջ:

Ժողովածուն ընդգրկում է «Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործնթացների համատեքստում» գիտաժողովի նյութերը

ՀՏԴ 355/359 (479.25)

ԳՄԴ 68.49 (2h)

ISBN 978-5-8084-1742-7

© ԵՊՀ հրատ., 2013

© Կազմողի համար, 2013

## **Բովանդակություն**

### **Արա Մարգարիտյան**

Միջուկային Թուրքիան Աերկայիս միտումները և զարգացման Աերուժը .....3

### **Լևոն Շիրիմյան**

Այսրկովկասը և Եվրոպական արժեքային համակարգը .....28

### **Կարինե Նալշաջյան**

Հայրենիք և հայրենասիրություն .....40

### **Լևոն Հովսեփյան**

Թուրքիայի զինված ուժերի արդիականացման միտումների ու  
ռազմավարության շուրջ .....47

### **Դավիթ Զամալյան**

Հրադադարի սոցիալ - հոգեբանական նկարագիրը. հոգեբանական-  
տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները հրադադարի  
պայմաններում .....62

### **Միրաքյան Վահրամ**

Բանակի վերաբերյալ սոցիալական դիրքորոշումների ձևավորման որոշ  
դրսերումները հայկական մամուլում .....77

### **Արծրուն Հովհաննիսյան**

Աղբբեկանական ռազմականացում. ՌՕՌԻ-երի դերը պատերազմում .....99

### **Սիեր Բարդասարյան**

Բալամական հեղափոխության պահապանների կորպուսի (ԽՀՊԿ) ստեղծումը և  
նրա հետագա զարգացումը .....117

### **Նարեկ Ս. Գալստյան**

Եվրոպական միության այսրկովկասյան քաղաքականության  
պատճառականները .....123

### **Աստղիկ Խաչատրյան**

Չպարտվածի կերպարի կերտման գործընթացն Աղբբեկանում .....135

## **Արամ Թերզյան**

Եվրոպական միության հարավկովկասյան քաղաքականության  
փոխակերպման միտումները ..... 160

## **Նելի Վարդանյան**

Դպրոցականների հոգեբանական պատրաստվածությունը բանակին ..... 172

## **Նարեկ Ս. Գալստյան**

**ք. գ. թ., ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների  
և գործընթացների ամբողջի դոցենս**

### **ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԱԿԱՆՆԵՐԸ**

#### **Ներածություն**

Եվրոպական միուրյան (ԵՄ) ակտիվությունն Այսրկովկասում սկսվել է ԽՍՀՄ փլուզումից և տարածաշրջանի երկրների անկախության հոչակումից անմիջապես հետո, եթե Եվրոպական ընկերակցությունը\* մեկնարկեց ՏՐԱՍԵԿԱ (1993 թ.), ԻՆՕԳԵՅԹ (1995 թ.) և ՏԱՄԻ (1991 թ.) ծրագրերը, որոնց թիվ անց ավելացան նաև ԱՊՀ բոլոր երկրների հետ կնքված ԳՀՀ-ները\*: 2003 թ. ընդունվեց Եվրոպական անվտանգության ռազմավարությունը (ԵԱՌ), որը որոշակիորեն հստակեցրեց խնդիրների այն շարքը, որոնք ԵՄ-ն դիտում է որպես սպառնալիք, ինչպես նաև սահմանեց դրանց չեղոքացման ռազմավարության հայեցակարգային ուղղենիշները: ԵՄ-ի և տարածաշրջանի երկրների հարաբերություններում առանցքային նշանակություն ունեցան Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ, 2006 թ.) և «Արևելյան գոր-

---

\* 1992 թ. Մասատրիխստի պայմանագրով հիմնադրվեց ԵՄ-ը, որի «առաջին պունք» դարձավ մինչև 2009 թ. Լիսաբոնի պայմանագիրն իր գոյությունը պահպանած Եվրոպական ընկերակցությունը: Թեև ԵՀ-ն համարվում էր ԵՄ-ի մաս, սակայն տնտեսական ոլորտում այն օժտված էր բարձր ինքնավարությամբ:

\* ՏՐԱՍԵԿԱ – TRACECA, Transport Corridor Europe-Caucasus-Asia, ԵՄ-և Կենտրոնական Ասիան կապակցող ցանցավորված տրանսպորտային ծրագիր, ԻՆՕԳԵՅԹ – INOGATE, Interstate Oil and Gas Transport to Europe, Կենտրոնական Ասիայից և Կասպյան ավազանից Էներգապահապահները դեպի ԵՄ-ի տարածք փոխադրելուն ուղղված ծրագիր: Այս երկու ծրագրերը շրջանցում են ՌԴ-ի տարածքը: ՀՀ մասնակից է երկու ծրագրերին Էլ: ՏԱՄԻ – TACIS, Technical Assistance to the Commonwealth of Independent States, ԱՊՀ երկրների և ՏՐԱՍԵԿԱ, ԻՆՕԳԵՅԹ ծրագրերի ֆինանսատեխնիկական աջակցության ծրագիր: ԳՀՀ – PCA, Partnership and Cooperation Agreement, բազմաշափ, բազմոլրտ համագործակցության համաձայնագրեր:

ծընկերություն» (ԱԳ, 2009 թ.) ծրագրերի մեկնարկները: Այս ծրագրերի միջոցով ԵՄ-ն փորձում է «ծածկել» տարածաշրջանի պետությունների հետ համագրծակցության բոլոր նշանակալի ոլորտները: Ավելին, թեև դրանք չեն պարունակում ներպետական և միջակետական հակամարտությունների կարգավորման մեխանիզմներ, այդուհանդերձ, բովանդակում են դրանց կարգավորման անհրաժեշտության դրույթներ և նպատակ ունեն ստեղծելու կարգավորման համար որոշակի նպաստավոր պայմաններ:

Տարածաշրջանը մտավ ԵՄ-ի ակտիվ քաղաքականության օրակարգ 2004 թ. ընդլայնմամբ, և ներկայումս, կապված նաև 2007 թ. ընդլայնման և Թուրքիայի հետ անդամակցության բանակցությունների աշխուժացման, ինչպես նաև 2008 թ. ուսու-վրացական հակամարտության հետ, ԵՄ-ն սկսել է մեծ ուշադրություն դարձնել տարածաշրջանի խնդիրներին: Թեև պաշտոնական փաստաթղթերում Այսրկովկասը «Հարավային Կովկաս» անվամբ դիտարկվում է որպես ինքնուրույն միավոր, նրա իրական նշանակությունը ԵՄ-ի համար, մեր համոզմամբ, պատճառաբանվում է տարածաշրջանի աշխարհագրական դիրքով՝ որպես Սևծովյան-Կասպյան էներգետիկ տարածաշրջանի բաղադրիչ և Եվրոպան Կենտրոնական Ասիայի հետ կապող բնական միջանցք: Եվ, չնայած ԵՄ-ը ցայսօր չունի համակողմանի մշակված ռազմավարություն Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի նկատմամբ, ԵՄ-ի այսրկովկասայն քաղաքականության մեջ կարելի է առանձնացնել երեք փոխկապակցված պատճառականներ (դետերմինատներ)՝ էներգետիկ և հաղորդակցային ուղիների շահագործումը և դրանց ապահովությունը, դրա համար անհրաժեշտ տարածաշրջանային խաղաղության և համագործակցության ապահովումը, որի հիմքում էլ ընկած է երկրների ներսում համակարգային-քաղաքական կայունության ապահովման խնդիրը: Ի տարբերություն արտատարածաշրջանային մյուս դերակատարների՝ իր տարածաշրջանային քաղաքականությունն այստեղ ԵՄ-ը կառուցում է «փափուկ ուժի» տրամարանության վրա՝ կարևորելով այնպիսի մեթոդների կիրառումը, ինչպիսիք են ժողովրդավարացմանը, արդյունավետ պետության, մրցակցային և շուկայական տնտեսության կառուցմանը, տարածաշրջանային համագործակցությանն աջակցությունը:

## Պատճառականների ընդհանուր բնութագիրը

### • Էներգետիկ և հաղորդակցային չափում

Եվրոպական վիճակագրական ծառայության 2011 թ. տարեգրի համաձայն՝ ԵՄ-ի տարածքում առաջնային էներգիայի արտադրությունը զնալով նվազում է՝ 1998 թ. 940 մլն. տոննայի փոխարեն 2008 թ. կազմելով 842.7 մլն տոննա, որից միջուկային էներգիան կազմում է 28.7 %, կոշտ վառելիքը՝ 21 %, բնական գազը՝ 19,9 %, նավթը՝ 12,7 %, իսկ վերականգնվող էներգիան՝ 17,6 %<sup>179</sup>: Փոխարենն աճում է դրանց ներկրումը՝ 2000 թ. 826732 տոննայի դիմաց 2008 թ. կազմելով 1 014 961 տոննա<sup>180</sup>: Զուգահեռաբար աճել է նաև մատակարարումներից ու մատակարար երկրներից կախվածությունը: Եվրոպական հանձնաժողովի «Կանաչ գրքի» համաձայն՝ ներկայիս միտումների պահպանման դեպքում 2030 թ. ԵՄ-ը ստիպված կլինի ներկրել էներգակիրների առնվազը 70%-ը<sup>181</sup>: Եվ յնդիրն այն է, որ դրանք ներկրվելու են հիմնականում անկայուն տարածաշրջաններից և յնդրաշատ երկրներից: Բնականաբար, սահմանափակ թվով աղբյուրներից կախվածությունը սահմանափակում է և կսահմանափակի ԵՄ-ի ինքնուրույնությունն արտաքին քաղաքականության ոլորտում: Հենց այդ հիմնախնդիրներն են այսօր հիմնականում կազմում Կենտրոնական Ասիայում, Կովկասյան-Կասպյան, Միջերկրածովյան տարածաշրջաններում ԵՄ-ի արտաքին և անվտանգության քաղաքականության միջուկը: Հենց էներգետիկ գործոնն է այսօր հանգուցային դեր խաղում ՌԴ-ի, իսկ էներգակիրների տարանցման ուղիների անվտանգության ապահովման խնդիր՝ Ռւկրանայի, Թուրքիայի ու հարավկովկասյան երկրների հետ ԵՄ-ի հարաբերություններում: Եվ քանզի ԵՄ-ի ռազմավարական կախվածությունը մերձավորակելյան նավթի և ոռւսական գազի ներկրումներից դեռ պահպանվում է, չյուսիսային ծովում արդյունահանման ծավալների նվազմանը զուգահեռ մեծ կարևորություն է ստանում Կասպյան ավազանից Այսրկովկասով, Սևծովյան տարածաշրջանի միջոցով Եվրոպա էներգա-

<sup>179</sup> Տե՛ս Europe in figures, Eurostat yearbook 2011, Publications Office of the European Union, 2011, p. 541:

<sup>180</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 543:

<sup>181</sup> Տե՛ս Green Paper: Towards a European Strategy for the security of energy Supply, European Commission 2000:

կիրների անվտանգ և անխափան տեղափոխման հարց: Բացի դրանից, 2009 թ. տարեսկզբի ռուս-ուկրայինական «գազային հակադրությունն» ակնհայտ դարձրեց ԵՄ-ի էներգետիկ անվտանգության խոցելիությունը և ռուսական էներգակիրների ներկրումից չափազանց կախվածությունը: Այս ամենն ակնհայտ դարձրին այն հանգամանքը, որ մոտ ապագայում ԵՄ-ի էներգետիկ քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը լինելու է Կասպյան ավագանը և Կենտրոնական Ասիան («Հարավային միջանցք»): Այս համատեքստում էապես աճում է Այսրկովկասի՝ որպես Եվրոպա այդ ածխաջրածնային պաշարների տարանցման օպտիմալ և ՌԴ-ը շրջանցող տարածքի նշանակությունը:

Այդ նպատակով ԵՄ-ը շարունակում է զարգացնել տարանցիկ նշանակություն ունեցող ՏՐԱՍԵԿԱ և ԻՆՕԳԵՅԹ ծրագրերը: Ավելին, 1997 թ. Տրանսպորտի նախարարների եվրոպական III խորհրդաժողովում Սև ծովը հաստատվեց որպես Անդրեվոպական տրանսպորտային չորս գոտիներից մեկը<sup>182</sup>: Իսկ ԻՆՕԳԵՅԹ ծրագիրը տեխնիկական և ներդրումային աջակցությունը կենտրոնացնում է Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի ածխաջրածնային պաշարների արդյունահանման և տեղափոխման հարցերում: «Արևելյան գործընկերություն» ծրագրի մեջ ևս տեղ են գտել համանման դրույթներ, որոնցից մեկը վերաբերում է Էլեկտրաներգիայի տարածաշրջանային շուկաների ձեռավորմանը, էներգիայի արդյունավետության և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործման ծավալների ավելացմանը, իսկ մյուսը՝ «Հարավային էներգետիկ միջանցքին», որի նպատակն է՝ բազմազանեցնել տարանցիկ ուղիները և մատակարարման աղբյուրները ԵՄ-ի և նրա գործընկեր երկրների համար<sup>183</sup>:

Որոշ հեղինակների գնահատմամբ, ԵՄ-ի կողմից իրականացված հիմնական ծրագրերը վկայում են այն մասին, որ ԵՄ-ի՝ Հարավային Կովկասում ունեցած շահերը պայմանավորված են հիմնականում էներգետիկ աշխարհագրական և տնտեսական գործոններով՝ տարածաշրջանի լայն հնարավորությունները կասպյան էներգետիկ պաշարներն Արևմուտք տեղափոխելու, Այսրկովկասի ներուժն իբրև Ասիա-Եվրոպա առևտուրային այլընտրանքային կամքջի և գնողունակ շուկաներ ստեղծե-

<sup>182</sup> St'u Black Sea Pan-European Transport Area (BS-PETrA) - <http://www.bs-petra.org/6>.

<sup>183</sup> St'u Eastern Partnership, Communication from the European parliament and the Council, Commission staff Working Document, Brussels, 2008:

լու նպատակով<sup>184</sup>: ԵՄ-ի արտաքին կապերի գծով նախկին հանձնակատար Կ. Պատուենի խոսքերով, «Հարավային Կովկասը մուտք է ապահովում դեպի Կասպյան տարածաշրջանի էներգապաշարները, որը ԵՄ-ը դիտարկում է որպես իր էներգետիկ պահանջմունքների բազմազանեցման աղյուրներից մեկը»<sup>185</sup>: Այս հանգամանքը, իր հերթին, պայմանավորում է ԵՄ-ի շահագրգորվածությունը հակամարտությունների խաղաղ կարգավորման, տարածաշրջանային կայունության և խաղաղության՝ որպես տարանցիկ ուղիների, խողովակաշարերի անվտանգության միակ երաշխիքի մեջ:

Եվրոպական էներգետիկ շուկաները սնուցելուն են ուղղված Բարու-Թրիլիսի-Ձեյհան նավթամուղն ու Բարու-Թրիլիսի-Էրզրում գազամուղը, ինչպես նաև ԵՄ-ի «Հարավային էներգետիկ միջանցք» ծրագրի միջուկը հանդիսացող «Նարուկլո» գազատարի նախագիծը, որոնք կոչված են կասպյան ածխաշրածնային պաշարները Վրաստանի տարածքով փոխադրել ժուրքիա, այնտեղից՝ եվրոպական էներգետիկ շուկաներ: Սրանք բոլորը շրջանցում են ՀՀ՝ հանդիսանալով արդբեջանաթուրքական տանիեմի կողմից տարածաշրջանային էներգետիկ-հաղորդակցային նախագծերից ՀՀ մեկուսացման գործիքներ: Չնայած այդ հանգամանքը բազմիցս քննադատության է արժանացել տարբեր քաղաքական և վերլուծական շրջանակների կողմից, այդուհանդերձ, դա ոչ մի էական ազդեցություն չունեցավ ոչ այդ ծրագրերի, ոչ էլ հետազայռում նախագծված ուղիների վրա: Հատկանշական է, որ 2012 թ. մարտի 25-27-ը Սեուլում (Հարավային Կորեա) կայացած Միջուկային անվտանգության գագաթնաժողովում ունեցած իր ելույթում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը կարևորեց էներգետիկ պաշարները շարամիտ քաղաքական կապիտալի վերածելու դեմ պայքարը: Նրա խոսքերով, «Հայաստանի շուրս անմիջական հարևաններից երկուսը, խախտելով միջազգային իրավունքի նորմերը, երկու տասնամյակ շարունակ շրջափակման մեջ են պահում մեր երկիրը՝ ի թիվս բազմաթիվ այլ խնդիրների, այլևնտրանք շթողնելով նաև էներգետիկ անկախության ուղիների ընտրության

<sup>184</sup> Sh'u Landau A. and Whitman R., Rethinking the European Union, European Values and National Interests, London, 2001, p. 144:

<sup>185</sup> Sh'u “Южный Кавказ расположен на пороге ЕС», Эксклюзивное интервью Комиссара Европейского Союза по внешним связям Криса Паттена армянскому информационному агентству Медиамакс, июль 2003 г.:

հարցում»<sup>186</sup>: ՀՀ շրջանցող արդեն գործող և նախազգվող ծրագրերն կլ ավելի են ամրապնդում Աղբբեջանի՝ որպես հիմնական մատակարար և - Կասպյան ավազանի տարանցիկ երկրի, Թուրքիայի՝ որպես տարանցիկ գլխավոր երկրի դիրքերն էներգետիկ բանակցություններում: Ավելին, այս ծրագրերը նաև գործիք են հանդիսանում Աղբբեջանի ու Թուրքիայի ձեռքերում՝ ՀՀ առնչվող հարցերում իրենց համար ցանկալի մանկրային դաշտ ապահովելու համար:

#### • *Sարածաշրջանային կայունության և համագործակցության չափում*

Տարածաշրջանի էներգետիկ-հաղորդակցային նշանակության աճը պայմանավորում է տարածաշրջանային խաղաղության գործում ԵՄ-ի շահագրգությունը: Մասնավորապես, ԵԱՌ-ում ամրագրվում է Այսրկովկասի խնդիրների նկատմամբ առավել մեծ և ակտիվ հետաքրքրություն ցուցաբերելու անհրաժեշտությունը: Դրանում ամրագրված սպառնալիքները և դրանց հակազդելու մեխանիզմները ևս վերաբերում են Այսրկովկասին: Օրինակ՝ տարածաշրջանային հակամարտությունների, փակ ասիմանների և անվստահության միջնորդի առկայությունն Այսրկովկասում ԵՄ-ը դիտարկում է որպես իր իսկ անվտանգության սպառնալիքներ<sup>187</sup>: ԵԱՌ ներդրման հաշվետվության մեջ<sup>188</sup> անդրադարձ է կատարվում 2008 թ. վրաց-ռուսական հակամարտությանը, ինչպես նաև Այսրկովկասում «սառեցված հակամարտությունների» կամ «սառեցված անկայունությունների» առկայությանը: Դրանց կարգավորման գործում մեծ կարևորություն է տրվում ԵՄ-ի ընդհանուր դիրքորոշման ձեւակերպմանը և համալիր մեխանիզմների ներդաշնակ կիրառմանը:

Սկսած 2003 թ. ԵՄ-ը հարավկովկասյան գործընթացներին սկսեց ներգրավվել նաև որպես անվտանգության ոլորտի դերակատար: Առաջին քայլը դարձավ առաքելությունը Վրաստանում, ինչպես նաև արագ արձագանքման մեխանիզմի կիրառումը հեղափոխությունից հետո ժո-

<sup>186</sup> Working visit of President Serzh Sargsyan to the Republic of Korea, 25-27.03.2012 <http://www.president.am/events/visits/eng/?visits=1&id=383>.

<sup>187</sup> A Secure Europe in a Better World, European Security Strategy, Brussels, 12 December 2003.

<sup>188</sup> Տե՛ս Report on the Implementation of the European Security Strategy, Providing Security in a Changing World, Brussels, 11 December 2008:

դովլդավարական գործընթացների խրախուսման գործում<sup>189</sup>: Հաջորդ փուլն արդեն ԵՀՔ մեջ այսրկովկապայան երկրների ներառումն էր և Գործողությունների ծրագրերի շուրջ բանակցությունները, որոնք ևս պարունակում էին հակամարտությունների խաղաղ կարգավորման մասին դրույթներ: «Արևելյան գործընկերության» ներկայացումը ևս վկայում է տարածաշրջանի նկատմամբ ԵՄ-ի հետաքրքրության աճի մասին:

Ընդհանուր առմամբ, ԵՄ-ի վերաբերմունքը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործին լիովին տեղափոխում է Միջազգային ճգնաժամային խմբի տված բնորոշման մեջ, ըստ որի՝ ԵՄ-ը ոչ թե աշխատում է հակամարտությունների վրա, այլ դրանց շուրջ (“working around conflict” vs “working on conflict”)<sup>190</sup>: Մինչ 2008 թ. ոուս-վրացական հակամարտությունը հարավկովկապայան իրադարձություններին ԵՄ-ը նախընտրում էր միջամտել միջնորդավորված՝ այլ միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ և ՄԱԿ) մեխանիզմների միջոցով: Այդուհանդերձ, ի տարբերություն Արցախի, որտեղ միջազգային կազմակերպությունները հետպատերազմական վերականգնման աշխատանքներ չեն կատարել կամ ֆինանսավորել, 1992-2003 թթ. ընթացքում Վրաստանը ԵՄ-ից ստացել է մոտ 370 մլն եվրոյի օգնություն, որից 27 մլն հետպատերազմական վերականգնման ու բարեփոխումների աշխատանքների համար<sup>191</sup>: 2006 թ. տվյալների համաձայն՝, ԵՄ-ը հանդիսանում էր Աբխազիայի ու Զարավային Օսիայի ամենամեծ դրույթը, թեև չեր հանդիսանում այդ տարածքներում հակամարտությունների կարգավորման առաջնային դերակատարը<sup>192</sup>:

*Ոուս-վրացական հակամարտության դեպքում ԵՄ-ն օպերատիվ արձագանքեց նոր ստեղծված իրավիճակին և կարողացավ առաջարկել «սառեցման» իր ծրագիրը\*: Այսօր ԵՄ-ը հակամարտության գոտում ու-*

<sup>189</sup> Sh’u Conflict Resolution in the South Caucasus: EU’s Role, Europe Report N 173- 20 March 2006:

<sup>190</sup> Sh’u Conflict Resolution in the South Caucasus: The EU’s Role, Europe Report 173, 20.3 2006:

<sup>191</sup> Sh’u Popescu N., Europe’s Unrecognised Neighbours. The EU in Abkhazia and South Ossetia, CEPS Working Document No. 260/March, p. 2:

<sup>192</sup> Sh’u Emerson M., Popescu N., European Neighbourhood Policy Two Years on: Time indeed for an «ENP plus», Journal of Foreign Policy of Moldova, issue: 03 / 2007, p. 20:

\* Առաջին հայացքից սա կարելի է համարել տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործում ԵՄ-ի լուրջ ձեռքբերում: Սակայն կարծում ենք, որ իրականում դա բավական փոխահամեստ «գործարք» էր. մի կողմից՝ իր ռազմավարական հիմնական խնդիրները լուծած ՈՒ-ն այլև շահագրգռված չէր պատերազմի շարու-

նի իր առաքելությունն ու հատուկ ներկայացուցիչը: Այս առումով հատկանշական է ԵՄ-ի ընդգծված զգուշավորությունը ՈՒ-ի հանդեպ. չնայած իր մի շարք անդամների և Վրաստանի կոչերին՝ ԵՄ-ը չփոխեց «կոչտ» միջոցների, որոնք կարող էին ռազմավարական կոպիտ սիսալի վերածվել հենց ԵՄ-ի համար<sup>193</sup>:

Սակայն ԵՄ-ի ներգրավվածությունն Արցախան հակամարտության կարգավորմանն անհամեմատելի է Արխագիայի կամ Հարավային Օսիայի հետ: Այս դեպքում ԵՄ-ը չի ֆինանսավորել տնտեսական օժանդակության ծրագրեր, և նրա ակտիվությունը կապված է եղել ԵՄ Հատուկ ներկայացուցիչ գործունեության ու ԵԱՀԿ ՄԻ-ին օժանդակության հետ: ՀՀ-ի ու Ադրբեջանի դիրքորոշումն էլ ԵՄ-ի մասնակցության հարցում տարբերվում է Վրաստանից: ՀՀ-ի համար ԵՄ-ն աստիճանաբար ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում, սակայն՝ որպես հարակից երկրորդական դերակատար: Փոխարեն անվտանգության հարցերում առջնային նշանակություն տրվում է ԱՄՆ-ին ու ՌԴ-ին: Դա ընկած է նաև Ադրբեջանի մոտեցման հիմքում՝ չնայած այս պետության մշտական ցուցադրական ջանքերին՝ ԼՂ հիմնախնդրի կարգավորումը ԵԱՀԿ ՄԻ ձևաչափից տեղափոխել է միջազգային ամենատարբեր հարթակներ:

ԵՄ-ի կողմից կարևորվող տարածաշրջանային մյուս հակասությունը վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին: Խնդիրն այն է, որ, մի կողմից, ՀՀ-ի երկկողմ շրջափակումը Թուրքիայի և Ադրբեջանի կողմից՝ հապես խոշնրուսում է ԵՄ-ի տարածաշրջանային նախաձեռնությունների լիարժեք իրազործմանը, իսկ մյուս կողմից՝ ԼՂ հակամարտության առկայությունն ինքնին վտանգում է հերզետիկ և հաղորդակցային նախագծերի իրականացումը: Զայ-թուրքական հարաբերությունների բարելավման վերաբերյալ ԵՄ-ի ներկայացուցիչները բազմիցու և տարբեր ձևաչափերով իրենց դրական վերաբերմունքն ու աշակցության պատրաստակամությունն են հայտնել: Սակայն այս հարցում

նակաման մեջ ու ճիշտ ժամանակին ստացավ ԵՄ-ի միջնորդական առաջարկը, մյուս կողմից՝ ԵՄ-ը, հանդես զալով միջնորդությամբ, ևս շահարգոված էր իր կարևոր գործներների միջև հակամարտության «սառեցման», էներգետիկ ու հաղորդակցային ուղիների անխափան աշխատանքի ապահովման մեջ: Բացի դրանից, այդ առաքելությունը որոշակիորեն նպաստեց հակամարտությունների կարգավորման հարցում ԵՄ-ի հեղինակության ամրապնդմանը:

<sup>193</sup>Տէ և Եվրոպական Միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում: Միջմասնագիտական հետազոտություն, Եր., 2009, էջ 122-126:

ակնհայտ է ԵՄ-ի հարաբերական թուղությունը: Այսպես, չնայած 1993 թ. Թուրքիան, ի համերաշխություն Արցախյան հարցում Ադրբեջանի դիրքորոշման հետ, փակեց փաստացի սահմանը ՀՀ հետ և սկսվեց ՀՀ տնտեսաքաղաքական շրջափակումը, 1995 թ. նույն Թուրքիայի հետ ԵՄ-ը կնքեց մաքսային միության պայմանագիր: Ավելին, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, սահմանների վերաբացումն այդպես էլ տեղ չզտան ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցային փայերի մեջ: ԵՄ-ը նաև գործնական քայլեր չիրականացրեց Թուրքիայի նկատմամբ հայ-թուրքական «Փուտբոլային դիվանագիտությունը» տապալելու համար՝ բավարարվելով միայն երկխոսությունը վերսկսելու, հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին հայտարարություններով:

### • Համակարգային արդիականացման չափում

Այսրկովկասում ԵՄ-ի անվտանգային քաղաքականության մեջ կարելի է նկատել ժողովրդավարական խաղաղության տեսության որոշ տարրեր: Այդ տեսության համաձայն, ժողովրդավարական երկրները միշտ շարք պատճառներով հակված չեն միմյանց միջև ծագած հակասությունները լուծելու համար դիմելու ռազմական մեթոդների<sup>194</sup>: Այսինքն՝ Այսրկովկասի առումով կարելի է խոսել ժողովրդավարական զարգացումների հակամարտության կարգավորման վրա հնարավոր դրական անդրադարձների մասին:

ԵՄ-ի հարևանությամբ «ժողովրդավարական կայունության և բարեկեցության» գոտու ստեղծման հիմքում ընկած է հարևան երկրներում արդյունավետ կառավարման, ժողովրդավարության, իրավական պետության կայացմանն աջակցության գաղափարը: Այդ քաղաքականության հիմքում կարելի է առանձնացնել մի շարք հիմնասակրունքներ, ինչպիսիք են ժողովրդավարական և տնտեսական վերափոխումների

---

<sup>194</sup> Ժողովրդավարական խաղաղության տեսության հիմնադրույթների և դրանց ըննադատության վերաբերյալ առավել մանրամասը տե՛ս, մասնավորապես, **Farham B.**, The Theory of Democratic Peace and Threat Perception, in International Studies Quarterly (2003) 47, 395–415; **Grayson K.**, Democratic Peace Theory as Practice: (Re)Reading the Significance of Liberal Representations of War and Peace, YCISS Working Paper Number 22, March 2003; Democratic Peace Theory - <http://www.spiritus-temporis.com/democratic-peace-theory/>:

աջակցությունը՝ որպես երկարաժամկետ խաղաղության և կայունության նախապայման, տարածաշրջանային համագործակցություն՝ տարատեսակ ռազմավարական դաշինքների մեջ մտնելու փոխարեն, ներգրավումը որոշումների ընդունման եվրոպական համակարգի մեջ: ԵՄ-ի այս մարտավարությունն իրականացվում է եվրոպականացման<sup>195</sup> տրամաբանության շրջանակներում, որի հիմնական գործիքներ հանդես են գալիս քաղաքական փոխայիմանավորումը (այսպես կոչված «մտրակի և քաղցրահացի» քաղաքականությունը) և սոցիալականացումը՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով ժողովրդավարական արժեքների տարածումը: Հենց դրանց են նպատակառուղղված ԵՀՔ-ը և ԱԳ-ը, որոնց շրջանակներում պետություններին հատկացվող ֆինանսատնտեսական աջակցությունը, ազատ առևտորի գոտու ստեղծումը, անցագրային ռեժիմի մեղմացումն ուղղակիորեն փոխկապակցում են այդ պայմանագրերում ամրագրված դրույթների պատշաճ իրականացման հետ:

## Հետևություններ

Համադրական վերլուծության ենթարկելով ԵՄ-ի տարածաշրջանային ծրագրերն ու այսրկովկապայն քաղաքականությունը, ակնհայտ է դառնում, որ մեր տարածաշրջանում ԵՄ-ի քաղաքականությունը կառուցվում է երեք փոխկապակցված պատճառականների վրա (1) ԵՄ-ի էներգետիկ պահանջմունքների բավարարումը և բավարարման ուղիների բազմազանեցումն ապահովելու նպատակով էներգետիկ-հաղորդակցային պաշարների փոխադրում Եվրոպա, (2) փոխադրման անվտանգության նպատակով տարածաշրջանային համագործակցության և խաղաղության ապահովում, (3) իսկ դրա համար՝ տարածաշրջանի

<sup>195</sup> Եվրոպականացումը մենք դիտարկում ենք որպես եվրոպական քաղաքական մշակույթի տարածում, որի միջնորդ կազմում են եվրոպական ձևանմուշով քաղաքական, իրավական և տնտեսական ինստիտուտների կառուցումն ու համապատասխան բարեփոխումների իրականացումը: Տվյալ դեպքում որպես եվրոպականացման միջով հանդես է գալիս ժողովրդավարացմանն աջակցությունը: Եվրոպականացման հայեցակարգային իմբերի մասին առավել հանգամանուրեն տե՛ս Գալստյան Ն., Եվրոպականացման գործնքացները Հարավային Կովկասում // «Միախար Գոշ» գիտամեթոդական հանդես. Հասարակական գիտություններ, 4/12, Էջեր 10-14:

Երկրներում քաղաքական, վարչական, իրավական և տնտեսական արդիականացման աջակցություն:

Բնականաբար, տարածաշրջանային real politic-ը թելադրում է իր տրամաբանությունը. Կասպյան ավազանի Էներգապաշարներով ԵՄ-ի հետաքրքրվածության աճը մեծացնում է նաև նրա կախվածությունն առլա և հնարավոր մատակարար ու տարանցիկ երկրներից, մասնավորապես՝ Աղրբեջանից, Վրաստանից և Թուրքիայից: Այդ կախվածությունն էլ, իր հերթին, մի կողմից՝ սահմանափակում է այդ երկրների վրա ԵՄ-ի ազդեցության հնարավորությունները, մյուս կողմից՝ ընդլայնում այդ երկրների ԵՄ-ի վրա ձնշում գործադրելու հնարավորությունները: Դա ստեղծում է ԵՄ-Թուրքիա-Վրաստան-Աղրբեջան քառամիասնական փոխկախվածության շրջանակ, որով կարելի է պատճառաբանել տարածաշրջանում ԵՄ-ի վարած քաղաքականության մի քանի անհամամասնություններն ու անհամաշափությունները, ինչպիսիք են, օրինակ, ՀՀ հետ հարաբերությունների կարգավորման, փաստացի սահմանի վերաբացման պահանջի բացակայությունը ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցային փաթեթում, Արցախում հետհակամարտային վերականգնողական աշխատանքներին աջակցության բացակայությունը:

Այս հանգամանքը նաև որոշակի կասկածներ է առաջացնում հակամարտությունների կարգավորման գործում ԵՄ-ի ակտիվ ներգրավման անհրաժեշտության, արդյունավետության հարցում: Նախ, ԵՄ-ի աձող հետաքրքրվածությունը կասպյան Էներգապաշարների տարանցման մեջ որոշակիորեն ստվերում է նրա անկողմնակալությունն Արցախյան հակամարտության կարգավորման գործում: Որոշակի մտահոգություն է առաջացնում նաև այն հանգամանքը, որ, օրինակ, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում, ունենալով Թուրքիայի հետ բանակցային գործընթացում ձնշում գործադրելու հնարավորություն, ԵՄ-ը ոչ միայն չի կարողացել կառուցողական դարձնել Թուրքիայի դիրքորոշումը, այլև անզամ ի վիճակի չի եղել հարկադրել Թուրքիային՝ բացել ՀՀ-ԵՄ մաքսային սահման հանդիսացող թուրքիայկան փաստացի սահմանը: Բացի դրանից, թեև ԵՄ-ն ունակ է «սառեցնելու» հակամարտություններ, սակայն թիւ հավանական ենք համարում նրա ուղղակի ներգրավումը տարածաշրջանում դրանց կարգավորման գործում, քանզի նախ՝ ԵՄ-ը բավական «դանդաղաշարժ» է անվտանգության հարցերում, երկրորդ՝ կոնկրետ արցախյան հիմ-

նախնդրով արդեն գոյություն ունեցող ԵԱՀԿ ՄԽ ձեաշափի փոփոխությունը չի երաշխավորում հակամարտության կարգավորումը, երբորդ՝ տեղի երկրներն իրենք ԵՄ-ին առաջմ չեն դիտարկում որպես անվտանգային ծանրակշիռ դերակատար, և, չորրորդ, եթե ԵՄ-ն, ստանձնելով հակամարտության կարգավորման առաջնային դերակատարություն, չկարողանա շուտափույթ կարգավորել այն, նրա հեղինակությանը կհասցվի լուրջ հարված:

Այս ամենը բոլորովին չեն երաշխավորում ԵՄ-ի այսրկովկասյան քաղաքականության առաջնահերթությունները երկարաժամկետ կտրվածքով՝ ստեղծելով որոշակի անհամապատասխանություն, մի կողմից՝ հայտարարված նպատակների ու սկզբունքների, իսկ մյուս կողմից՝ իրական քաղաքականության միջև։ Իդեալական տարբերակում ԵՄ-ի այսրկովկասյան դերակատարությունը պետք է լիներ նրա իսկ հռչակած նպատակներին ու սկզբունքներին լիովին համահունչ որպես տարածաշրջանում կայունությանը, փոխահավետ համագործակցությանը և զարգացմանը նպաստող «փափուկ ուժ»։ Մասնավորապես, ՀՀ դիտանյունից նշանակալի կիխնեխն ԵՄ-ի գործուն նախաձեռնությունները՝ ուղղված ՀՀ հարաբերությունների կարգավորման հարցում Թուրքիային ու Ադրբեյջանին դեպի կառուցրդական քայլերի հարկադրելուն, այդ երկրներում հայատյացության ու ՀՀ տնտեսաքաղաքական շրջափակման վերացմանը, Արցախում հետհակամարտային վերականգնողական ենթակառուցվածքային ծրագրերի աջակցությանը։